Փոփոխություն

16 հոկտեմբեր 2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՕՎԻԵԴՈՅԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է **Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների եւ կենսաբժշկության մասին կոնվենցիան» (Օվիեդոյի կոնվենցիա)**[1]՝ կարեւոր միջազգային փաստաթուղթ, որը հաստատվել է **1997 թվականին**՝ կենսաբժշկության, բիոէթիկայի եւ առողջապահական պրակտիկայի ոլորտներում մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակով:

Սա կարեւոր քայլ է Հայաստանի միջազգային պարտավորությունների ամրապնդման գործում. այն ընդգծում է պետության պատրաստակամությունը հետեւելու մարդու արժանապատվությունը պաշտպանող բիոէթիկական սկզբունքներին: Սակայն կարեւոր է արձանագրել, որ կոնվենցիայի որոշ դրույթներ այսօր արդեն **անհամատեղելի են մարդու իրավունքների պաշտպանության արդի ընկալման տեսանկյունից՝** հատկապես այն հարցերում, որոնք վերաբերում են հոգեկան առողջության փորձառություն ունեցող եւ | կամ **հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին**:

▽ Պատմական փաստաթուղթ՝ իր ժամանակի սահմաններում

Օվիեդոյի կոնվենցիան ընդունվել է **ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի ընդունումից շուրջ մեկ տասնամյակ առաջ՝** այն ժամանակ, **երբ հաշմանդամությունը դիտարկվում էր** հիմնականում **բժշկական կամ խնամքի մոդելով**: Այդ ժամանակաշրջանում տարածված էին այնպիսի մոտեցումներ, որոնք մարդու փոխարեն որոշում կայացնելու իրավունքը փոխանցում էին այլ անձանց՝ «պաշտպանության» պատրվակով:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո (2006 թվական) «հաշմանդամություն» հասկացության ընկալումն արմատապես փոխվել է. այն այլեւս բժշկական կամ սոցիալական խնդիր չէ, այլ մարդու իրավունքների եւ հավասարության հարց:

Անառարկելիորեն հաշմանդամություն ունեցող անձի՝ իր մարմնի, կյանքի եւ առողջության վերաբերյալ որոշումները պետք է ընդունվեն **ինքնուրույն, իր կամքով եւ իր ձայնով**:

[1] «Կենսաբանության եւ բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների եւ արժանապատվության պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա | Մարդու իրավունքների եւ կենսաբժշկության մասին կոնվենցիա (Օվիեդոյի կոնվենցիա)

▽ Երբ պաշտպանությունը վերածվում է վերահսկողության

Օվիեդոյի կոնվենցիայի որոշ հոդվածներ շարունակում են արտացոլել հին մտածողությունը, որտեղ որոշումները կայացվում են անձի փոխարեն՝ նրա «շահերից» ելնելու պատրվակով: Այդ մոտեցումները հակասում են Հայաստանի ստանձնած պարտավորություններին՝ որպես Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կողմ:

⇒ **Օվիեդոյի կոնվենցիայի 6-րդ հոդվածը** թույլ է տալիս բժշկական միջամտություն այն անձանց նկատմամբ, ովքեր համարվում են «անգործունակ»՝ երրորդ կողմի համաձայնությամբ:

Այս դրույթը հակասում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածին, որը ճանաչում է յուրաքանչյուր անձի իրավունակությունն ու պարտադրում պետություններին անցնել աջակցվող որոշումների ընդունման համակարգի:

⇒ **Օվիեդոյի կոնվենցիայի 7-րդ հոդվածը** սահմանում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կամքին հակառակ կարելի է իրականացնել հարկադիր բուժում՝ օրենքով նախատեսված պայմաններով:

Սա ուղղակիորեն հակասում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 14-րդ հոդվածին, որն արգելում է ազատությունից զրկումը կամ հարկադիր բուժումը հաշմանդամության հիմքով:

⇒ **Օվիեդոյի կոնվենցիայի 17-րդ հոդվածը** թույլ է տալիս գիտական հետազոտություններ այն անձանց մասնակցությամբ, ովքեր չեն կարող ինքնուրույն համաձայնություն տալ:

Այս դրույթը հակասում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 15-րդ եւ 17-րդ հոդվածներին, որոնք պաշտպանում են մարդու ֆիզիկական ու մտավոր անձեռնմխելիությունն ու պահանջում, որ ցանկացած բժշկական կամ գիտական միջամտություն կատարվի միայն անձի ազատ եւ իրազեկ համաձայնությամբ:

▽ Ժամանակակից բարեփոխումների անհրաժեշտությունը

Վերջին տարիներին Եվրոպայի խորհրդում ակտիվորեն քննարկվում է Օվիեդոյի համակարգը թարմացնելու անհրաժեշտությունը: Մասնավորապես, մի շարք պետություններ եւ միջազգային կառույցներ բարձրաձայնել են, որ կոնվենցիան պետք է

համապատասխանի այն սկզբունքներին, որոնք ամրագրված են **Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայում հաշմանդամության հիմքով հարկադրանքի բացառմամբ եւ իրավահավասարության ապահովմամբ**: Այս քննարկումները ցույց են տալիս, որ **բիոէթիկան չի կարող զարգանալ մարդու իրավունքների պաշտպանության համակարգից դուրս**:

▽ Հայաստանի առջեւ բացվող պատասխանատվությունը եւ հնարավորությունը

Օվիեդոյի կոնվենցիայի վավերացումը Հայաստանին հնարավորություն է տալիս ձեւավորելու առողջապահական եւ սոցիալական քաղաքականություն, որը հիմնված է մարդու արժանապատվության վրա, սակայն այդ քաղաքականությունը պետք է կառուցվի **մարդու իրավունքների պաշտպանության արդի համակարգի եւ** ոչ՝ անցյալի իրավական ընկալամբ:

Մենք կոչ ենք անում Հայաստանի կառավարությանը՝

1) Օվիեդոյի կոնվենցիայի կիրարկումը ապահովել **համաձայն Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի դրույթների եւ սկզբունքների**՝ բացառելով որեւէ հարկադիր կամ փոխարինող որոշումների համակարգ:

2) **Նախաձեռնել Սահմանադրության եւ քաղաքացիական օրենսգրքի, ինչպես նաեւ ոլորտային իրավական ակտերի դրույթների վերանայում**, որոնք դեռեւս օգտագործում են անգործունակության եւ հոգաբուժական հարկադրանքի գաղափարները:

3) **Ստեղծել աջակցող որոշումների ընդունման համակարգեր**, որտեղ յուրաքանչյուր անձի ձայնը որոշիչ է:

4) Ապահովել, որ ոչ մի բժշկական միջամտություն կամ հետազոտություն չկատարվի առանց անձի **իրազեկ եւ ազատ համաձայնության**: